ՖՐԱՆՍԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ (ԺԱՖ) ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարը համակողմանիորեն քննեց և հաստատեց համաշխարհային հեղափոխական պրոցեսի, միջազգային կոմունիստական շարժման և հակաիմպերիալիստական պայքարի խնդիրները հասարակական առաջադիմության, խաղաղության և դեմոկրատիայի իրականացման վերաբերյալ։ Մոլորակի առաջադիմական ուժերի մղած ընդհանուր պայքարում համագումարը մեծ կարևորություն տվեց ոչ սոցիալիստական երկրների դեմոկրատական մասսայական շարժումներին։ ՍՄԿԿ XXVII համագումարի կողմից ընդունված կուսակցության ծրագրի նոր խմբագրությունում ասված է. «Մեր ժամանակի բնորոշ գիծը մասսայական դեմոկրատական շարժումների վերելքն է ոչ սոցիալիստական աշխարհում... Մոնոպոլիաների բռնացման, կառավարող դասակարգերի հետադիմական քաղաքականության դեմ մղվող պայքարում հետզհետե ավելի ակտիվորեն են ընդգրկվում մտավորականությունը, ծառայողները, ֆերմերությունը, քաղաքային մանր բուրժուազիայի, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, կանանց կազմակերպությունները, երիտասարդությունը և ուսանողությունը... Այդ շարժումները օբյեկտիվորեն ուղղված են իմպերիալիզմի հետադեմ շրջանների քաղաքականության դեմ, միախառնվում են խաղաղության և սոցիալական առաջադիմության պայքարի ընդհանուր հոսանքին»[1]։

Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ֆրանսահայ երիտասարդական միության (ԺԱՖ) խաղաղասիրական գործունեությունը։ Այս կազմակերպության դերն ու նշանակությունն ավելի ամբողջական պատկերացնելու համար անդրադառնանք ֆրանսահայ համայնքի կազմավորման և ԺԱՖ-ի ստեղծման պատմությանը։

Ֆրանսահայ համայնքն Արևմտյան Եվրոպայի հայ գաղթօջախների մեջ առանձնակի տեղ է գրավում և՛ իր սոցիալ-տնտեսական կառուցվածքով, և՛ հասարակական կյանքի առանձնահատկություններով։ Նրա կազմավորումն առաջին հերթին կապված է 1915 թ. մեծ եղեռնի և դրա անմիջական արդյունք բռնադատությունների հետ։ Դրա հետևանքով հայ գաղթականների հոծ զանգվածները ցրվեցին աշխարհով մեկ։ Ֆրանսիան եղավ այն երկրներից մեկը, որտեղ ապաստան գտավ հայ գաղթականների մի զգալի մասը։ 1920-ական թվականների սկզբին Թուրքիայից, Հունաստանից և Սիրիայից գաղթած բազմաթիվ հայեր ափ իջան Մարսելի նավահանգիստ, որտեղից և հետագայում տեղափոխվեցին Ֆրանսիայի ներկայիս հայաշատ քաղաքները[2]։ Այդ տարիներից էլ սկսվում է ֆրանսահայ համայնքի, որպես ինքնուրույն միավորի, ձևավորման ու կազմավորման շրջանը։ Ֆրանսահայ գաղթօջախը ձեռք է բերում իր ուրույն ե ինքնատիպ դիմագիծը, մուտք գործելով Ֆրանսիայի հասարակական քաղաքական կյանքի ոլորտը։ Այս շրջանում սկսվում է նաև Հայրենակցական միությունների, «Հայրենիքի օգնության մարմնի» (ՀՕՄ) և ապա Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) գործունեությունը։ Դրանք կարողացան իրենց շուր-

---

1 «Սովետական Հայաստան», 7. III. 1986։

2 Լ. Զորմիսյան, Համապատկեր Արևմտահայոց մեկ դարու պատմության, Դ հատոր, Հայ Սփյուռքը, Ա գիրք, Ֆրանսահայերու պատմությունը, Գեյրութ, 1975, էջ 73։

ջը համախմբել համայնքի հայրենանվեր անձանց և դնել հայրենիքի հետ անխախտ ու անխզելի կապերի հիմնաքարերը։ 1937 թ. ծնվում է Ֆրանս-հայկական միությունը, որը, սակայն, ոմնենում է կարճ կենսագրություն։ Սկսվում է միջազգային գրության սրման լարված ժամանակաշրջանը և երկրորդ համաշխարհային պատերազմը։ Վրա են հասնում Ֆրանսիայի հայ համայնքի համար դժվարին ժամանակներ։ Ֆրանսահայությունը ևս չհաշտվեց ֆաշիստական օկուպացիայի հետ և նրա լավագույն զավակները նետվեցին ընդհատակյա պայքարի հորձանուտները։ Մ. Մանուշյանի, Լ. Ասլանյանի, Ն. Տեր-Մարտիրոսյանի, Ա. Թուլումջյանի, Վ. Վաճառականյանի, Հ. Դպիրյանի սքրանքները մտան ֆրանսահայ համայնքի պատմության անմոռանալի տարեգրության մեջ։

1944 թ. Ֆրանսիայի ազատագրումից և երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ֆրանսահայ համայնքի համար սկսվեց մի նոր փուլ։ Դեռևս Դիմադրության շարժման տարիներին հիմնվել էին Հայ ազգային ճակատը և Հայ երիտասարդ հայրենասերների միությունը, որոնք օկուպացիայի շրջանում համառ պայքար էին մղում ֆաշիստական զավթիչների դեմ։ Ետպատերազմյան շրջանում խաղաղ նպատակներով այս կազմակերպությունները համայնքում ծավալեցին հայրենասիրական լայն գործունեություն։ Այս շրջանում Հայ ազգային ճակատի ու Հայ երիտասարդ հայրենասերների միության ակտիվ աշխատանքը և համայնքում տիրող հայրենասիրական ոգևորությունը ապացույց էին այն բանի, որ պատերազմը չէր սպանել ֆրանսահայերի ազգային ոգին և որ համայնքում կենդանի էր մայր հայրենիքի հետ շփվելու ձգտումը։ Հայ երիտասարդ հայրենասերների միությունը հետագայում վերանվանվեց ֆրանսահայ երիտասարդական միություն (ԺԱՖ)։

ԺԱՖ-ը հիմնվեց 1945 թ. ամռանը, հիմնականում Դիմադրության շարժման նախկին մասնակիցների կողմից։ Ֆրանսահայ երիտասարդության մի կարևոր մասը այդ պայքարի մեջ էր մտել «ոչ միայն իր մայր հայրենիք Սովետական Հայաստանի պաշտպանության, այլև համահավասար կերպով Ֆրանսիայի համար, դայն նկատելով իր երկրորդ հայրենիքը»[3]։ Իր հիմնադրման հենց առաջին օրերից կազմակերպությունը գրավեց առաջադիմորեն տրամադրված երիտասարդության ուշադրությունը և դարձավ ֆրանսահայ հայրենասեր երիտասարդության գաղափարների կրողը։ Տարածելով և ընդլայնելով իր գործունեության շրջանակները և ձեռք բերելով մեծ հեղինակություն, ԺԱՖ-ը դարձավ համայնքի ամենաազդեցիկ երիտասարդական կազմակերպությունը։ ԺԱՖ-ը հիմնեց իր մասնաճյուղերը Մարսելում, Լիոնում, Վալանսում և այլուր։ Այն ունի 14 մասնաճյուղ և մոտավորապես 2000 անդամ[4]։

«Նոտր վուա» («Մեր ձայնը») ամսաթերթը, որպես ֆրանսահայ երիտասարդական միության (ԺԱՖ) օրգան, լայն հեղինակություն է վայելում ֆրանսահայ առաջադեմ երիտասարդության շրջանում և հանդիսանում է նրա քաղաքական, ազգային և հոգևոր կյանքը համակողմանիորեն արտացոլող, երիտասարդ սերնդին հուզող ամենահրատապ հարցերին արձագանքող և նրա ձգտումների ու նպատակների հետ համաքայլ ընթացող ամսաթերթ։ Իր համարներում թերթը լուսաբանում է ԺԱՖ-ի գործունեությունը, ցույց է տալիս նրա առաջադիմական նախաձեռնությունների կարևոր նշանակությունը և իր բողոքի ձայնն է բարձրացնում երկրագնդի այս կամ այն անկյունում տեղի ունեցող բռնատիրական ակտերի ու պատերազմների դեմ։

ԺԱՖ-ը իր գործուն մասնակցությունն է բերում խաղաղության պաշտպանությանը։ 1947 թ. սկսած ֆրանսահայ երիտասարդական միությունը դառ-

---

3 «Աշխարհ», 24. V. 1975։

4 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 875, ց. 5, գ. 71, թ. 1—3։

նում է Դեմոկրատական երիտասարդության համաշխարհային ֆեդերացիայի (ԴԵՀՖ) անդամ[5]։ Այս միջազգային ֆեդերացիան միավորում է բազմաթիվ երիտասարդական կազմակերպություններ, անկախ նրանց քաղաքական և կրոնական համոզմունքներից, ռասայական և ազգային պատկանելությունից։ Ֆեդերացիան, որի խնդիրն է հանդես գալ հանուն խաղաղության և ազգային անկախության, հիմնվել է 1945 թ. Լոնդոնում, Երիտասարդության համաշխարհային կոնֆերանսի ժամանակ։ Ֆեդերացիան կազմակերպում է սեմինարներ, հանդիպումներ, իրագործում է բազմաթիվ ձեռնարկումներ՝ հօգուտ խաղաղության ամրապնդման և, որ գլխավորն է, երիտասարդության փառատոների գլխավոր կազմակերպիչ ուժն է։ ԺԱՖ-ը կանոնավոր մասնակցում է ֆեդերացիայի կազմակերպած բոլոր միջոցառումներին։ Այսպես՝ 1948 թ. ԺԱՖ-ն իր անդամներին ուղարկեց Բուլղարիա, որտեղ կառուցվում էր «Դիմիտրով» հիդրավլիկ ամբարտակը, որը Դեմոկրատական երիտասարդության համաշխարհային ֆեդերացիայի նախաձեռնությունն էր[6]։ ԺԱՖ-ը 1949 թ. Բուդապեշտում մասնակցում է ԴԵՀՖ-ի երկրորդ կոնգրեսին ու երիտասարդության և ուսանողության II փառատոնին, 1951 թ. Բեռլինում՝ III փառատոնին, 1953-ին Բուխարեստում՝ IV փառատոնին և դրանց հաջորդող բոլոր փառատոներին[7]։ 1962 թ. օգոստոսին ԺԱՖ-ը, երիտասարդական 140 կազմակերպությունների շարքում, Վարշավայում մասնակցում է ԴԵՀՖ-ի անդամ կազմակերպությունների VI ասամբլեային[8]։ Նույն թվականի հուլիս-օգոստոսին Հելսինկիում տեղի ունեցավ երիտասարդության և ուսանողության համաշխարհային VIII փառատոնը։ Ֆրանսահայ երիտասարդական միությունն ուղարկել էր երկու պատվիրակ՝ Մաթիլդա Վարժապետյանին և Բյուզանդ Ֆընդրկյանին։ «Նոտր վուան» անդրադառնալով այս կարևոր իրադարձությանը, նշում է, որ ֆրանսահայ պատվիրակները ոչ միայն առիթ էին ունեցել շփվելու համաշխարհային առաջադեմ երիտասարդության ներկայացուցիչների հետ, այլև հանդիպում էին ունեցել Սովետական Հայաստանի երիտասարդության պատվիրակների հետ, անմիջական զրույցի ընթացքում ծանոթացել և միմյանց պատմել էին սփյուռքահայ և Սովետական Հայաստանի երիտասարդությանը հուզող հարցերի մասին[9]։

ԺԱՖ-ը իր ուշադրության կենտրոնում է պահում դեմոկրատական երիտասարդության խաղաղասիրական գործունեությունը և աջակցություն է ցույց տալիս այդ շարժմանը։ Այս գործում հատկապես կարևոր դեր է խաղում «Նոտր վուան» ամսաթերթը, որն առաջնորդող և խմբագրական հոդվածներում պարբերաբար ներկայացնում և գնահատում է երկրագնդի առաջադեմ երիտասարդության կազմակերպած նշանակալից բոլոր միջոցառումները։ Այսպես, երիտասարդության և ուսանողության համաշխարհային X բեռլինյան փառատոնի կապակցությամբ թերթը կարծիք էր հայտնում, որ փառատոնը թույլ կտա զարգացնելու փոխըմբռնման այն կապերը, որոնք միավորում են համաշխարհային երիտասարդությանը հանուն խաղաղության, բարեկամության և համերաշխության ամրապնդման բոլոր ժողովուրդների միջև[10]։ Նույն առիթով թերթի 1973 թ. 163 համարում զետեղված է հարցազրույց բեռլինյան փառատոնի պատվիրակ Մասիս Փեհլիվանյանի հետ (ներկայումս ԺԱՖ-ի նախագահն է)։ Ահա թե ինչպես է նա գնահատել փառատոնի նշանակությունը։ «Արդեն հիմա կարելի է հաստատել, որ փառատոնը ունի մեծ կարևորություն երիտասարդության պայքարում ընդդեմ բռնության, անարդարության և թշվառության, հանուն լավագույն ապագայի»։ Պատվիրակության անդամներից մեկը՝ Պատրիկ Ազատիկյանը, մասնակցել էր սեմինարի՝ «Երիտասարդությունը և

5 „Notre voix", 1960, № 210, էջ 17—19։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում։
8 Նույն տեղում։
9 Նույն տեղում, 1962, № 79, էջ 1—2։
10 Նույն տեղում, 1973, № 160, էջ 1։

պայքարը ֆաշիզմի, միլիտարիզմի դեմ հանուն դեմոկրատիայի» թեմայով։ Մ. Փեշլիվանյանը նշում է նաև, որ փառատոնի աշխատանքների ընթացքում իրենց դաշտոդվել է հանդիպումներ ունենալ այլ երկրների պատվիրակություններ ի անդամ սփյուռքահայ երիտասարդների (շուրջ 50 հայեր), ինչպես նաև Սովետական Հայաստանի ներկայացուցիչների հետ։ Փառատոնին մասնակցող սփյուռքահայ երիտասարդների հրապարակած կոմյունիկեում ասված էր. «Աշխարհով մեկ ցրված սփյուռքահայերը բավարարված են խաղաղության, անվտանգության և զինաթափման համաձայնություններով, քանի որ դրանք բացում են մի նոր դարաշրջան, որը թույլ կտա մի կողմից զարգանալու իրենց մայր հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, մյուս կողմից տկիզբն է դնում մի ժամանակաշրջանի, որը հնարավորություն կտա խաղաղորեն վերացնելու այն անարդարությունները, որոնցից տառապում են ժողովուրդները...»[11]։ Իր գործունեության անքակտելի մասը համարելով բարեկամության և եղբայրության այս միջոցառումներին մասնակցելը, ԺԱՖ-ը շեշտում է իր սկզբունքային կապը քաղաքացիական բարձր գիտակցություն ունեցող և առաջադեմ գաղափարներով տոգորված երիտասարդ ուժերի հետ։ ԺԱՖ-ի գործունեության 30-ամյակին նվիրված հոդվածում թերթն այսպես է բնութագրել միության գործունեությունը. «Դեմոկրատական երիտասարդության համաշխարհային ֆեդերացիայի և խաղաղասիրական շարժման անդամ ԺԱՖ-ը Ֆրանսիայի երիտասարդության հետ միասին, ընդգրկված լինելով լայն շարժումների մեջ, բազմաթիվ միջազգային հանդիպումների շնորհիվ ստեղծում են լայն հորիզոններ խաղաղության ամրապնդման, համերաշխության և բարեկամության համար...»[12]։

Յուրաքանչյուր փառատոնի նախօրյակին ԺԱՖ-ը մասնակցում է Ֆրանսիայի փառատոների նախապատրաստական կոմիտեի աշխատանքներին[13]։ Հավանայի երիտասարդության և ուսանողության XI փառատոնին, որը կայացավ 1978 թ. ամռանը, ԺԱՖ-ը նույնպես ուղարկեց իր անդամներին ֆրանսիական պատվիրակության կազմում, որը ներկայացնում էր 500 պատվիրակ՝ 23 կազմակերպություններից[14]։ Այս փառատոնին նվիրված մի հոդվածում «Նոտր վուան» գրում է. «Աշխարհի երիտասարդությունը մի շարք երկրներում իր վրա կրեց ֆաշիզմի սարսափները...։ Այս երիտասարդությունը ցանկանում է հետագայում ապրել խաղաղության, բացարձակ անկախության մեջ, նա շուտ հասկացավ ազգային ազատության շարժումներին մասնակցելու անհրաժեշտությունը, նա ցանկանում է ապրել, վերջապես ապրել...»[15]։

ԺԱՖ-ը ճիշտ է հասկանում ԴԵՀՖ-ի գործունեության նշանակությունը, որպես երիտասարդությանը բարձր գաղափարների շուրջ համախմբող, նրա նպատակների իրականացման համար մարտնչող և նրա գործողությունները կազմակերպող ուժի։ Մեկնաբանելով ԴԵՀՖ-ի IX ասամբլեայի (1974) աշխատանքները, ամսաթերթը նշում է երիտասարդության ջանքերի բևեռացման այն երեք ուղղությունները, որոնք համարում է հիմնական. ա) երկրի երիտասարդության և դեմոկրատական բոլոր ուժերի միավորման անհրաժեշտությունը սոցիալ-տնտեսական և քաղաքական առաջընթացը ապահովելու համար, բ) պայքարը խաղաղության համար ամբողջ աշխարհում, քանի որ այն ապահովում է անհրաժեշտ պայմաններ ավելի արդար և ներդաշնակ հասարակության կառուցման, անկախության և ազատության ձեռքբերման համար, գ) պայքարը նեոգաղութատիրության և իմպերիալիզմի բոլոր ձևերի դեմ, հա-

---

11 Նույն տեղում, № 162, էջ 7։

12 Նույն տեղում, 1975, № 177, էջ 1։

13 Նույն տեղում, 1965, № 98, էջ 1։

14 Նույն տեղում, 1978, № 197, էջ 3։

15 Նույն տեղում։

կայմպերիալիստական համերաշխությունը որպես դեմոկրատական երիտասարդությանը մոբիլիզացնող գործոն[16]։ ԺԱՖ-ը, ուրեմն, աշխարհայացքային հստակ մոտեցում է ցուցաբերում դեպի նեոդաղութատիրությունը՝ որպես իմպերիալիզմի օրգանական ծնունդի և ազգային անկախության պայքարի ճնշման գործիքի։

Գտնվելով հակաիմպերիալիստական պայքարի դիրքերում, ԺԱՖ-ը, 1949 թ. սկսած հանդիսանում է խաղաղասիրական շարժման ակտիվ մասնակից։ Այս շարժումն ուղղված է պատերազմների նախապատրաստման դեմ և ծագել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ժողովրդական մասսաների քաղաքական ակտիվության բարձրացման հետևանքով։ Երկրորդ համաշխարհային պատերազմից և հիտլերյան Գերմանիայի շախջախումից հետո ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջանների քաղաքականության մեջ ուժեղացան միլիտարիստական ձգտումները։ Հակառակ Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականության, իմպերիալիստական տերությունները բռնեցին ռազմականացման վտանգավոր կուրս, վտանգի տակ դնելով խաղաղությունը։ Աշխարհի ժողովուրդները ցասումով բողոքի դուրս եկան, և ծնվեց մեր ժամանակի ամենամասսայական շարժումներից մեկը՝ խաղաղության կողմնակիցների համաշխարհային շարժումը։ Ունենալով երկրորդ համաշխարհային պատերազմի ավերիչ հետևանքների դառը դասը և լավ հասկանալով նոր պատերազմի սանձազերծման ամբողջ վտանգավորությունը, ժողովրդական լայն մասսաները, ի դեմս խաղաղության կողմնակիցների շարժման, լայն պայքար ծավալեցին նոր պատերազմի նախապատրաստման իմպերիալիստական պետությունների փորձերի դեմ։ Այս շարժումը միավորում է տարբեր դավանանքի, ազգային պատկանելության և սոցիալական համակարգի պատկանող այն մարդկանց, որոնք գիտակցում են նոր համաշխարհային կատակլիզմների ճակատագրական նշանակությունը, հատկապես արդի փուլում, երբ մասսայական ոչնչացման զենքերն ունեն կործանարար ահռելի հնարավորություններ։

1949 թ. ապրիլին Պրագայում և Փարիզում միաժամանակ տեղի ունեցավ խաղաղության կողմնակիցների առաջին կոնգրեսը, որին մասնակցում էին 72 երկրների ներկայացուցիչներ։ Կոնգրեսի ժամանակ ընտրվեց խաղաղության կողմնակիցների շարժման ղեկավար մարմին՝ խաղաղության կողմնակիցների կոնգրեսի մշտական կոմիտե, աշխարհահռչակ գիտնական Ֆ. Ժոլիո-Կյուրիի գլխավորությամբ։ ԺԱՖ-ը հենց առաջին կոնգրեսից դարձավ այդ կազմակերպության անդամը[17]։

Խաղաղասիրական շարժումը միանգամից լայն թափ ստացավ, ընդգրկելով նորանոր ռեգիոններ և դարձավ միջազգային լարվածության թուլացման հզոր զենք։ Այս շարժման 15-րդ տարեդարձին նվիրված մի հոդվածում «Նոտր Դամ» գրել է. «Գնահատել այսօր այն ճանապարհը, որ անցել է շարժումը սկսած իր հիմնադրումից (Փարիզ և Պրագա 25 ապրիլ 1949 թ.), նշանակում է նկատել միջազգային հարաբերությունների մեջ թափանցած այն անդառնալի ընթացքումը, որը սկսվում է 1950 թ. սառը պատերազմի տարիներից մինչև 1964 թ. լարվածության հարաբերական թուլացումը։

Սա հետևանք է այն բանի, որ շարժումը հանդիսանում է բոլոր ժողովուրդների սեփականությունը, անկախ ռասայից, դավանանքից և հայացքներից. այն ծագեց ճիշտ ժամանակին աշխարհի բոլոր անկյուններում և կարողացավ լսելի դարձնել միլիոնավոր մարդկանց, կանանց խաղաղասիրական ձայնը...»[18]։

ԺԱՖ-ը, ճիշտ կողմնորոշվելով դեպի խաղաղասիրական շարժումը, իր լուման է ներդնում ժողովուրդների ճնշման, միջուկային զենքերի օգտագործման,

16 Նույն տեղում, 1975, № 172, էջ 14։

17 Նույն տեղում, 1980, № 210, էջ 17—19։

18 Նույն տեղում, 1964, № 89, էջ 4։

նորանոր ավերիչ միջոցների արտադրության դեմ ծավալված պայքարի գործում։ Այսպես, 1950 թ. մարտի 19-ին խաղաղության կողմնակիցների մշտական կոմիտեն ընդունեց Ստոկհոլմի կոչը, որը պահանջում էր ատոմային զենքի՝ որպես մասսայական ոչնչացման միջոցի, լրիվ արգելում, ինչպես նաև միջազգային վերահսկողության սահմանում այս որոշման կատարման վրա։ Փաստաթուղթը նախատեսում է նաև ռազմական հանցագործներ հայտարարել այն կառավարություններին, որոնք կօգտագործեն այս զենքը։ Այս փաստաթղթի տակ իրենց ստորագրությունները դրեցին 500 միլիոն մարդ ամբողջ աշխարհից։ Ֆրանսահայ երիտասարդական միությունը, խորը ըմբռնելով փաստաթղթի պատմական նշանակությունը, կոչի տակ հավաքեց ավելի քան 10 հազար ստորագրություն[19]։ ԺԱՖ-ին անդամագրված ֆրանսահայ երիտասարդները ոչ միայն բարոյապես և գաղափարապես են աջակցություն ցույց տալիս խաղաղասիրական ձեռնարկումներին, այլև գործով ծառայում են դրանց։

1961 թ. ամռանը երիտասարդական բազմաթիվ կազմակերպությունների և հատկապես սովետական երիտասարդության կազմակերպությունների կոմիտեի նախաձեռնությամբ տեղի է ունենում համաշխարհային երիտասարդական ֆորումը, որին մասնակցում են 109 երկրից շուրջ 330 կազմակերպություն։ Ֆրանսիայի պատվիրակության կազմում ֆորումին մասնակցում էր նաև ԺԱՖ-ը[20], որը ներկայացնում էր Ֆրանսիայի հայ առաջադեմ երիտասարդության տեսակետը։ «Այս դիրքորոշումը,— գրում էր «Նոտր վուան»,— ինչպես ամեն ոք գիտի, մեզ առաջնորդում է դեպի Ֆրանսիայի երիտասարդության և ժողովրդի հետ համերաշխության իրագործում, սկսած այն պրոբլեմների խորը և ռեալիստական ըմբռնումից, որոնք նպաստում են մեր ազգային մշակույթի պահպանմանը»[21]։ Դիրքորոշման մեջ դրսևորված է ԺԱՖ-ի վերաբերմունքը դեպի Ֆրանսիայի և ընդհանրապես ամբողջ աշխարհի առաջադեմ երիտասարդությունը։ Իր գործունեության հիմնական ուղղություններից մեկը ԺԱՖ-ը տեսնում է Ֆրանսիայի երիտասարդության հետ համագործակցության մեջ և որպես նրա պատվիրակության լիիրավ անդամ մասնակցում է համաշխարհային երիտասարդական ֆորումին, որը կարևոր նշանակություն ունեցավ երիտասարդության խաղաղասիրական ուժերի միավորման և նրանց գործողությունների համախմբման ասպարեզում։ Հավաքի ժամանակ տեղի ունեցան բանավեճեր, լսվեցին բազմաթիվ զեկուցումներ, ելույթներ և որոշ «ուժեղ գաղափարներ» արժանացան համընդհանուր հավանության. դրանք էին՝ խաղաղության ամրապնդումը աշխարհում, համընդհանուր և լրիվ զինաթափումը, գաղութատիրության բոլոր ձևերի դատապարտումը, ամբողջ աշխարհի երիտասարդության իրավունքների պաշտպանության իրականացումը և բոլոր երկրների երիտասարդների ինտերնացիոնալ համագործակցությունը[22]։ Հանրագումարի բերելով ֆորումի աշխատանքները, թերթը գրում էր. «Ֆորումը բազմաթիվ հանդիպումների, անկեղծ բանավեճերի շնորհիվ օգնեց զարգացնելու փոխադարձ ըմբռնումը, ջարդելու անվստահության պատերը և ավելացնելու ժողովուրդների փոխադարձ հարգանքը»[23]։

ԺԱՖ-ը աչքաթող չի անում խաղաղության ամրապնդմանը վերաբերող ոչ մի նշանակալից միջոցառում։ 1962 թ. հուլիսի 9—14-ը Մոսկվայում տեղի ունեցավ զինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսը, որը նպատակ ուներ գտնելու պատերազմները կանխելու ամենաարդյունավետ ճանապարհները և իր նշանակությամբ մեծ տեղ գրավեց միջազգային հարաբերությունների կարգավորման գործում։ ԺԱՖ-ը, որպես ֆրանսահայ համայնքի առաջադեմ երիտասարդության կազմակերպություն, մասնակցեց նաև այս

19 Նույն տեղում, 1980, № 210, էջ 17—19։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում, 1961, № 74, էջ 1։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում։

կոնգրեսին[24]։ «Նոտր վուան» թերթը մեկնաբանելով կոնգրեսի աշխատանքները, գրում է, որ աշխարհով մեկ ցրված տարբեր հայ գաղթօջախները և մեր ժողովուրդը ավելի ու ավելի մեծ մասնակցություն են ունենում խաղաղության պաշտպանության գործին։ «Եվ իսկապես, այս վերջին կոնգրեսի ժամանակ, ամբողջ աշխարհի հայերը լայն կերպով ներկայացված էին և կարելի է նաև ասել, որ սկսած 1949 թվականից, երբ նրանք մասնակցում էին տարբեր կոնգրեսների հօգուտ խաղաղության, մեր ժողովուրդը այսքան արժանավայել կերպով չի ներկայացվել»[25]։

Հայ ժողովրդի դառը ճակատագիրը՝ հարուստ օտար ճնշման դաժան դասերով, նրան ստիպել է իր ազգային գիտակցության մեջ արմատավորելու խաղաղության ձգտումը, որպես գոյության միակ պայմանի։ Եվ հայ համայնքի հին ու նոր սերունդները խորապես ըմբռնում են, որ միայն խաղաղ գոյակցության դեպքում է հնարավոր համայնքի գոյատևումը։ «Ինչպես ամեն մի ժողովրդի, այնպես էլ սփյուռքահայության հույսը նոր բարձրացող սերունդն է։ Ուստի պատահական չէ, որ սփյուռքահայության մեծագույն մտահոգությանառարկան այդ սերնդին պատերազմի ահավոր վտանգներից ու սարսափներից փրկելն է»[26]։ Այս ճանապարհի վրա ԺԱՖ-ը կատարում է օգտակար աշխատանք՝ Ֆրանսիայի հայ երիտասարդության ուշադրությունը սևեռելով ազգային խնդիրների և առաջին հերթին Սովետական Հայաստանի իրականությունը ներկայացնելու վրա։ ԺԱՖ-ը և ֆրանսահայ մշակութային միությունը համագործակցելով կազմակերպում են երեկոներ՝ նվիրված հայ արվեստագետներին և մտավորականներին, փառատոներ, որոնք վերածվում են ազգային մշակույթի պրոպագանդման մեծ միջոցառումների, հայկական ֆիլմերի ցուցադրումներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ՝ նվիրված հայ ժողովրդի անցյալին և այլն։

Սակայն ԺԱՖ-ը չի մեկուսանում իր զուտ ազգային խնդիրների մեջ և արձագանքում է Ֆրանսիայի ժողովրդին և երիտասարդությանը հուզող հարցերին, բարձր գնահատելով ֆրանս-հայկական բարեկամության նշանակությունը հայ համայնքի համար։ «Այս անվերջանալի պայքարը պատերազմների դեմ,— գրում է «Նոտր վուանն»,— ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդները, այնպես էլ Ֆրանսիայի և Հայաստանի ժողովուրդները մղում են խանդավառությամբ և անմնացորդ ծախսում են իրենց ուժերը ամեն անգամ, երբ խաղաղասիրական շարժումը հանդես է բերում նախաձեռնություններ, կազմակերպում է ազգային կամ միջազգային ասամբլեաներ»[27]։

1963 թ. ԺԱՖ-ը մասնակցում է Սենտ-Ուենում (Փարիզի շրջան) զինաթափման և խաղաղության համաֆրանսիական հավաքին, 1965 թ. Սեզի-Բանյոլում Մարկուլի ատոմային գործարանի մոտ տեղի ունեցած բողոքի ցույցին[28]։ Վերջինիս մասնակցում էին Ֆրանսիայի կրոնական, հասարակական տարբեր կազմակերպությունների, կոմունիստական, սոցիալիստական և ռադիկալ կուսակցությունների ներկայացուցիչները։ «Նոտր վուանն» այս միջոցառումը գնահատում է որպես «...պոզիտիվ մի պահ Ֆրանսիայում խաղաղության համար մղվող պայքարում»[29]։

ԺԱՖ-ը ուշադիր հետևում է նաև «100-ի կոչը» հակապատերազմական կազմակերպության գործունեությանը։ Այս կազմակերպությունը ստեղծվել է Ֆրանսիայում՝ 100 հեղինակավոր մտավորականների նախաձեռնությամբ և նպատակ ունի կանխելու միջուկային պատերազմի վտանգը։ 1982 թ. կազմա-

24 Նույն տեղում, 1980, № 210, էջ 17—19։

25 Նույն տեղում, 1962, № 79, էջ 1։

26 Հ. Սիմոնյան, Սփյուռքահայությունը սոցիոլ-քաղաքական պայքարի ուղիներում. Երևան, 1968, էջ 42—43։

27 „Notre Voix", 1963, № 85, էջ 1,

28 Նույն տեղում, 1965, № 95, էջ 1։

29 Նույն տեղում։

կերպությունը Ֆրանսիայի բոլոր խաղաղասիրական ուժերին կոչ է անում հունիսի 20-ին դուրս գալու ցույցի։ ԺԱՖ-ի ջանքերով այս մեծ ցույցին, որին մասնակցում էին 250.000 մարդ ամբողջ Ֆրանսիայից, ներկա են լինում նաև հայ երիտասարդները՝ իրենց պլակատներով, որոնց վրա դրված էր՝ «Ֆրանսիայի հայ երիտասարդները հանուն խաղաղության և զինաթափման»[30]։ Փարիզում տեղի ունեցած այս ցույցի և ԺԱՖ-ի նախաձեռնությամբ հայ երիտասարդների մասնակցության առիթով «Նոտր վուան» գրում էր, որ, վարելով մշակութային գործունեություն, ԺԱՖ-ը չի կարող չմասնակցել խաղաղասիրական միջոցառումներին, «քանի որ ոչ մի մարդ արարած և առավել ևս երիտասարդ, որին մտահոգում է լավագույն ապագան, չի կարող անտարբեր մնալ միջուկային դենքի ահավոր դինանոցի այս «ներկայացմանը», որին տիրապետում են այսօր մեծ տերությունները, անընդհատ ավելացնելով և կատարելագործելով դրանք։

Մենք ոչ միայն ենթարկվում ենք ռիսկի, տեսնելով մեր գլուխների վրա կախված դամոկլյան սուրը՝ ընդունակ անդառնալիորեն կործանելու ամբողջ մոլորակը, այլև միևնույն ժամանակ այն դոլլարները, որոնք նվիրաբերվում են զինման այս կատաղի կուրսին, թույլ չեն տալիս միլիոնավոր մարդկանց դուրս գալու թույլ զարգացման մակարդակից»[31]։ Եվ, որ ամենակարևորն է; թերթը հայերի մասնակցությունը պայմանավորում էր նրանով, որ մեր ժողովրդի պատմությունը ավելի, քան մյուս աղգերինը, սովորեցրել է, որ միջազգային արդար և խաղաղ միջավայրն է ժողովրդի զարգացման տարրական պայմանը[32]։ Թերթը նշում է, որ հայ ժողովուրդը շատ թանկ է վճարել խաղաղության մեջ ապրելու իր անկապտելի իրավունքի համար, որպեսզի մոռանա իր հիմնական պահանջները և չպահանջի նույնը բոլոր մարդկանց համար[33]։

ԺԱՖ-ը քաղաքականապես հասուն դիրք է գրավում արդի փուլի միջազգային իրադրության գնահատման հարցերում։ Կազմակերպությունը սկզբունքային ամուր դիրքերից սուր քննադատության է ենթարկում պատերազմ սկսելու ամեն մի փորձ և առաջին հերթին Ամերիկայի Միացյալ Նահանգների ագրեսիվ քաղաքականությունը։

1965 թ. ամռանը Հելսինկիում տեղի ունեցավ խաղաղության, ազգային անկախության և զինաթափման համաշխարհային կոնգրեսը։ Այն ընդունեց մի բանաձև, որը խիստ քննադատում էր ամերիկյան ագրեսիվ քաղաքականությունը։ ԺԱՖ-ը բանաձևի մեջ մտցրեց մի պարագրաֆ հայկական ջարդերի վերաբերյալ՝ Ծղեռնի 50-ամյակի առթիվ։ Այս կապակցությամբ «Նոտր վուան» գրում էր. «Սփյուռքահայերը, որտեղ էլ որ լինեն, ունեն իրավունք իրենց հնարավորությունների չափով արձագանքելու խաղաղության շարժման պահանջներին, որի շնորհիվ նրանք ամբիոն են ունենում լսել տալու արդարության իրավունքը, որը և արդարության պաշտպանություն է բոլորի համար, ունենում են մի շրջապատ, որտեղ ներդնում են իրենց անհրաժեշտ գործունեությունը աշխարհի խաղաղության համար և, վերջապես, սա մի հնարավորություն է հայ ժողովրդին պաշտպանելու մի նոր կատակլիզմից»[34]։

ԺԱՖ-ը ճիշտ է ըմբռնում 1920 թ. նոյեմբերի 29-ի բախտորոշ նշանակությունը հայ ժողովրդի համար և նրա ճակատագիրը չի առանձնացնում Սովետական Միության մյուս ժողովուրդների ճակատագրից։ Բարձր գնահատելով սովետական խաղաղասիրական քաղաքականությունը և պատերազմների պատճառը տեսնելով առաջին հերթին իմպերիալիզմի տնտեսական հիմքերի մեջ, ԺԱՖ-ը գիտակցում է, որ ամեն մի հակասովետական ոտնձգություն ուղղված՝

30 Նույն տեղում, 1982, № 220, էջ 8։
31 Նույն տեղում։
32 Նույն տեղում։
33 Նույն տեղում։
34 Նույն տեղում, 1965, № 100, էջ 2։

է Սովետական Հայաստանի դեմ։ «Այսօր Հայաստանի պատմությունը,— գրում է «Նոտր վուան»,— իր ազգային առանձնահատուկ բնույթով հանդերձ, կապված է Սովետական Միության պատմության հետ։ Այն ամենը, ինչը կարող է վնասել լարվածության թուլացմանը, զինաթափմանը, խաղաղությանը, հանգեցնել հարաբերությունների սրմանը Արևմուտքի և Արևելքի միջև, վտանգի տակ է դնում ներառյալ Հայաստանը»[35]։ «Ինչ վերաբերում է մեզ,— շարունակում է թերթը,— մենք չենք խնդրում ոչ ոքի կողմնակից լինելու սովետական իրականությանը իր կառուցվածքի ամբողջ խորությամբ։ Ամեն մի ազգ կառուցում է իր սեփական պատմությունը և սա հենց դրանով է լավ։ Մեզ հետաքրքրողն այն է, որ հարաբերությունները պետությունների միջև դրականորեն զարգանան, որ փոխադարձ կապերը բոլոր բնագավառներում գտնեն արտահայտման նորանոր ձևեր, որ բարեկամությունը և խաղաղությունը լինեն ուշադրության կենտրոնում, որ բոլոր ազգերը, հատկապես Ֆրանսիան և Հայաստանը, դրա մեջ գտնեն իրենց շահերը»[36]։

ԺԱՖ-ի օրգանը հաստատում է, որ սովետական երկրին ուղղված ամեն մի ոտնձգություն քողարկված հարված է նաև Սովետական Հայաստանին։

Քաջատեղյակ լինելով Սովետական Միության հիմնադրման և կազմավորման պատմությանը, նրա զարգացման ողջ պրոցեսին, ԺԱՖ-ը բարձր է գնահատում Հոկտեմբերյան հեղափոխության բացառիկ կարևոր նշանակությունը։ Սովետական Միության կազմավորման 50-րդ տարեդարձին նվիրված մի հոդվածում թերթը գրում է. «Ազատատենչ և հառաջադիմասեր մարդկությունը, այս օրերուս կտոնե տարեդարձ մը, որ այս տեսակի դեպքերեն է և պատմության կարևորագույններեն մին։ Այդ է 30 դեկտեմբեր 1922 թվականը, այսինքն Սովետական Սոցիալիստական Հանրապետություններու Միության հիմնադրության հիմնամյակը։ Սովետական Սոցիալիստական Հանրապետություններու Միության հիմնադրությունը շարունակություն է հոկտեմբերյան մեծ հաղթանակին, իր հետ բերած գաղափարներուն, իր ազնվական և մարդասեր դատին և հեղափոխական փոփոխություններուն։ Սովետական Միությունը, Հոկտեմբերյան հեղափոխության բացած նոր ուղին, նոր հորիզոններուն իրագործումն է և իր տարողությամբ կարևորագույն դեպքը ոչ միայն ցարական Ռուսաստանի ընկճված ժողովուրդներուն, այլ նաև համայն մարդկության պատմության»[37]։ Թերթը նշում է, որ հավատարիմ իր սկզբունքներին, իր գոյության տարիների ընթացքում Սովետական Միությունը հետևողականորեն պայքարել է հանուն խաղաղության հաստատման. «իր ազատատենչ և խաղաղասեր քաղաքականությամբ ու հիսուն տարվա անվեհեր ու անվհատ շանքերով Սովետական Միություն կփաստե նաև, թե աշխարհի խաղաղության երաշխիքը և խաղաղ գոյակցության անվերապահ ջահակիրն է»[38]։

Իր ստեղծման առաջին իսկ տարիներից Սովետական Միությունը, հենվելով Վ. Ի. Լենինի խաղաղ գոյակցության տեսության վրա, իր արտաքին քաղաքականությունը վարում է բոլոր ժողովուրդների ազգային շահերի հարգման սկզբունքների հիման վրա։ Աշխարհի ժողովուրդները բարձր են գնահատում Սովետական Միության վարած խաղաղասիրական քաղաքականության դրական նշանակությունը և իրենց համաձայնությամբ ու համակրանքով նոր ուժ ու թափ են հաղորդում նրան։ Սփյուռքահայության առաջադեմ ուժերը նույնպես պայքարի իրենց բաժինն են ներդնում միջազգային հարաբերությունների կարգավորման, քաղաքական նորմալ մթնոլորտի ստեղծման և ազգերի ներդաշնակ զարգացման գործում։ «Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները գիտակցում են, որ մեր օրերում, թեպետ իմպերիալիզմն իր բնույթով միշտ հղի է պատերազմներով, բայց կան ռեալ ուժեր, որոնք ընդու-

35 Նույն տեղում, 1982, № 323, էջ 4։

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում, 1972, № 156, էջ 1։

38 Նույն տեղում։

նակ են վիժեցնելու նրա ագրեսիվ պլանները»[39]։ Այդ ուժը նրանք տեսնում են Սովետական Միության խաղաղասիրական արտաքին քաղաքականության մեջ։

ԺԱՖ-ը, որպես ֆրանսահայ հայրենանվեր երիտասարդության կազմակերպություն, սերտ համագործակցելով Ֆրանսիայի մյուս առաջադիմական կազմակերպությունների հետ, հետևողականորեն ընթանում է Սովետական Հայաստանի և սփյուռքահայության միջև կապերի ամրապնդման, ֆրանս-հայկական, ֆրանս-սովետական բարեկամության ուժեղացման, ժողովուրդների խաղաղ գոյակցության և սոցիալական առաջադիմության ճանապարհով։

СОЮЗ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ ФРАНЦИИ (ЖАФ) В БОРЬБЕ ЗА МИР

НЕРСЕС МКРТЧЯН

Резюме

Союз армянской молодежи Франции—ЖАФ—одна из самых влиятельных организаций армянской общины во Франции. Это прогрессивная молодежная организация, которая выражает чаяния и стремления армянской патриотической молодежи Франции. Организация была основана в 1945 г. усилиями бывших участников движения французского Сопротивления. Ее цель—укрепить связь с Советской Арменией, пропагандировать ее культурные и экономические достижения, содействовать усилиям миролюбивых сил в борьбе за мир, демократию и социальный прогресс. ЖАФ является членом Всемирной федерации демократической молодежи и Движения сторонников мира. Организация принимает активное участие в международных форумах, ассамблеях, конгрессах и фестивалях, внося тем самым свою лепту в борьбу за мир и демократию.

39 Կ. Դալլաքյան, Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում, Երևան, 1962, էջ 12։